**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

16.05.2018թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյան,
ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՎՏԱ բաժնի պետ, Կ. Պողոսյան,
ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի սպա, լեյտենանտ Ս. Նիկոյան:
**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

Բացակայում է ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյանը:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

1. Մասնակցի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագրի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակցի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագրի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

1.1 «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը ներկայացրել է, սակայն որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրում բացակայում է պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ 17.05.2018թ. գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մասնակցին առաջարկել շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից համարվել են հրավերի պահանջներին համապատասխանող:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի օրենքով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի հայտը:

1.2 «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում, ներկայացված գնային առաջարկի հիման վրա, գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Ջի Վի ԷՆ» ՍՊԸ-ն:

1.3 Հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

1.4 Հանձնաժողովը որոշեց. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել ոչ ուշ քան, 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող (ԳԱՊ) | Վ. Գասպարյան |
| Գնահատող, | Գ. Ռուստյան |
| Գնահատող | Կ. Պողոսյան |
| Գնահատող | Ս. Նիկոյան |
| Գնումները համակարգող՝ | Ա. Ամիրյան |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 29.05. 2018թ.
ժամը $10^{00}$

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության հրային, ՎՔՆ, կոմտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռիստյան,

ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՎՏԱ բաժնի պետ, Կ. Պողոսյան,

ՀՀ ՊՆ ՌՌ ՀՕԾ բաժնի սպա, լեյտենանտ Ս. Նիկոյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

Բացակայում է ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյանը:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

1. Ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքի քննարկման մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքի քննարկման մասին.**

---

(Ա. Ամիրյան)

1.1 Սույն ընթացակարգի մասով 2018թ. մայիսի 24-ին «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն ներկայացրել է բողոք: Բողոքաբերը պահանջել է.

1. Արգելել գնահատող հանձնաժողովի 16.05.2018թ. թիվ 4 արձանագրության հիման վրա 21.05.2018թ. կայացված որոշման կատարումը կամ պարտավորեցնել ընդունել այն վերանայելու որոշումը՝ համապատասխան բարենպաստ որոշման տեսքով:

2.Կասեցնել գնման ընթացակարգը:

Քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ բողոքի մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ, ուստի հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը կասեցնել, մինչև համապատասխան որոշում կայացնելը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ներկայացված բողոքի վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու և այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Վ. Գասպարյան

Գնահատող Գ. Ոսկանյան

Գնահատող Կ. Պողոսյան

Գնահատող Ս. Նիկոյան

Գնումները համակարգող՝ Ա. Ամիրյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

05.06. 2018թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կոմունալ-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռիստյան,

ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՎՏԱ բաժնի պետ, Կ. Պողոսյան,

ՀՀ ՊՆ ՌՌ ՀՕԾ բաժնի սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

Բացակայում է ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյանը:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

**(Ա. Ամիրյան)**

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասով ներկայացված բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած որոշումը քննարկելու մասին.
2. Մասնակցի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի, առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասով ներկայացված բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած որոշումը քննարկելու մասին.**

---

**(Ա. Ամիրյան)**

1.1 Քանի որ 2018թ. մայիսի 31-ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ հիմք ընդունելով «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի 24.05.2018թ. ներկայացված ԳԲԽ-ԷՍ-2018/73 ծածկագրով բողոքն առանց քննության թողնելու մասին 31.05.2018թ. ներկայացրած միջնորդությունը, որոշեց «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից 24.05.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքը թողնել առանց քննության (կայքում հրապարակվել է 04.06.2018թ.), գնահատող հանձնաժողը որոշեց, մինչև բողոքը կայացրած որոշումները թողնել առանց փոփոխության:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Մասնակցի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի, առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

**(Ա. Ամիրյան)**

2.1 «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը առկա են: «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին բավարարող: Իսկ հայտով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը տարբերվում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով

նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրից, ուստի հանձնաժողովի գնահատող անդամներից՝ ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՎՏՍ բաժնի պետ, Կ. Պողոսյանի կողմից ներկայացվել է մասնագիտական եզրակացություն՝ հաստատված ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության պետի կողմից, համաձայն, որի, «Ջի Վի ԷՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը համարժեք է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին: Քննարկելով մասնագիտական եզրակացությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը նույնպես, գնահատել հրավերի պահանջներին բավարարող:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

2.2 Որակավորման հայտերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 06.06.2018թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Ջի Վի ԷՆ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

2.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4 դեմ՝ 0:

**3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող (ԳԱՊ) | Վ. Գասպարյան |
| Գնահատող, | Գ. Ռիստյան |
| Գնահատող | Կ. Պողոսյան |
| Գնահատող | Ս. Նիկոլյան |
| Գնումները համակարգող՝ | Ա. Ամիրյան |